

ՎԵՍՏԵԱՆ ԿՈՅՍ

ԳՍՏՄԱԿԱՆ ՎԵՂ

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Ց Ա Ռ Ա Ջ Ի Ն Դ Ա Ր Ո Ւ

(Տես յ'էջ 376)

ԳՆՈՒԽ Զ

ՎԵՍՏՄԱՑ Ի ՏԱՃԱՐԸ



ՎԼԱՍԻՆԵԱՆ բլրոյն հիւսիսային կողման վրայ, մինչև հիմակ հիացմամբ կը տեսնենք ասերակներ վեստայի տաճարէն, ուր կը վառէր անշէջ հուրը:

Յուստրնայի տաճարին և աղբեր քով շինուած էր Նուսնա Պոմպիլիոսի պաշտան, կամ ասելի ճիչն բսելով, հռոմէայեցի կայսերաց իմաստնագունին պարկեշտ բնակութիւնն, զոր ընդարձակելով պաշտան անուամբ մկրտեցին, նոյն իսկ Վեստայի քրմութեաց հոն հաստատուելէն վերջը, երբ Գոստոն Տարկուինոս Հռովմէն արտաքսեցաւ Երկայն դասիթով մի տաճարն միացած էր պաշտանն, և միջակ մեծութեամբ սրբազան միջավայրին մէջ բազմադարեան կազմներով անատակ մի կար:

Բոլորաձև և գեղեցիկ տաճարն կը բազկանար միայն փոքր գմբէթէ մի քսան սրձաքար սեանց վրայ յենած:

Մէջտեղը, Թանկագին մարմարեայ պատերով սրբարանն կար, ուր կը պահուէր Աթենասայ արձանն, հոն կը տրուէին նաև պատգամներն: Աթենասայ զուտ սկիւայ երևելի արձանն, որուն հովանաւորութեամբ Հռովմէայեցիք գիրենք մ' և է վառագէ զերծ կը կարծէին, զրուած էր ուղղանկիւնաձև

ցած բազնի մի վրայ, բրդեայ ժապաւէններով զարդարուած:

Ոչ որ, բաց 'ի քրմապետէն և Վեստայի կուսանաց մեծաւորունոյն, կրնար մանել այն խորհրդաւոր վայրը:

Ոմանց կարծիքն էր թէ հոն կը պահուէին Սամոդրակէի օրէնքները զորս Ենէաս Հռովմբերաւ. սրիշներ կ'ըսէին՝ թէ քրմահիններն կը պահեն հոն սրբազան օձ մի, որուն համար հինգ տարին մի անգամ շքեղ սեղան մի կը պատրաստեն:

Պղնձէ դրան քով կը գտնուէր Վեստայի խորանը, և քիչ հեռու մեծ եռոտանին որուն մէջ կը վառէր սրբազան հուրն զոր կը նորոգէին ամէն տարի մարտի 1ին: Եթէ ժամանակը չի լրացած մարէր, գէպք որ շատ քիչ անգամ կ'ըլլար, որովհետև անոր վրայ հսկող քրմահայն կեանքն վտանգի մէջ կ'ընկնէր, զարձեալ կը վառէին արևուն ճառագայթներով որ կ'անդրադառնային պղնձէ անոթի մի մէջ որ կը պարունակէր լուցիկ և չոր փայտի կտորուանք: Սիւներուն միջև կատուած էին արծաթեայ թիթեղներ՝ որոց վրայ երևելի անձանց դիմագծերը փորագրուած էին: Մաքրողութեանց ծառայող աւազանն տաճարէն զուրս կը գտնուէր:

Քրմուհեաց թիւն, որ չորսի կ'ելնէր Նումա Պոմպիլիոսի ժամանակ, վեցի բարձրացաւ Տարկուինոս Ելրեցի օրով: Ելթէ անոնցմէ մին մեռնէր, քրմապետն պապիական օրինաց իրաւունքով՝ ազնուական ընտանիքերէ տասներկուքէն տասնևվեց տարեկան քսան օրիորդներ կ'ընտրէր, և վիճակով կ'որոշէին այն որ աստուածունւոյն պիտի նուիրուէր:

Քրմուհիներն մեծ քահանայապետին իշխանութեան տակ էին, որ ընդհանրապէս կայսրն կ'ըլլար այն օրէն 'ի վեր, յորում Օգոստոս զերազոյն իշխանութեան հետ միացուցած էր նաև քրմապետութիւնը:

Երբ գաւթին մէջ մտաւ Կուսնելիա, զարմանօք տեսաւ որ բոլոր իւր ընկերուհիներն հոն ժողովուած են, բայց ի անկէց՝ որ կրակին վրայ կը հսկէր: Անոնց մանկական զէմքերն կեղծ ցրտութիւն մ'ունէին. աչքերուն մէջ չի կար երիտասարդութեան յատուկ կրքիւն: Եւ սակայն վրանին չէր տեսուեր քրիստոնէայ կուսանաց խաղաղ ստեղծութիւնն, որք վաճառուուն մէջ կ'ապաստանին՝ աշխարհային փոթորիկներէ զերծ մնալու համար: Ո՛չ յափտեմական վարձատրութեան մի յոյսն, և ոչ այլ մի անբիծ կեանքի փափաքն էր վիստեան կուսանքը տածարին մէջ բռնողն. հետևաբար շատ կը ձանձրանային վիճակէ մի՝ որ գիրեքք իրենց սիրած աշխարհէն կը բաժնէր: Իրենց աւաքինութիւններն առ չարն օւնեցած ատելութեան վրայ չէին հիմնուած. կը վախէին այն ահաւոր պատիժներէն որ կը սպասէին իրենց երբ պարտքերէն պակասէին, և յետոյ չէին ուզեր իրենց տոհմային անունը արատաւորել. և այս նպարտութիւնն աւելցած էր առհասարակ ժողովրդեան յարգաւորէն և ունեցած տառանջանշնորհութիւններէն: Մէկտեղ կ'ապրէին, սակայն ազատութիւնն այլ չէր պակսեր: Կրնային դուրս երթալ, այցելութիւններ ընդունել, ծերակոյտին ժողովներուն ներկայ ըլլալ, և երեսուն տարի տաճարին մէջ կենայէ յետոյ, հրաման ունէին ամուսնանալու. բայց շատ քիչ անգամ ամուսին մի կրնային գտնել, և առանց իրենց օւզելուն՝ հաւատարիմ կը մնային իրենց երգման, սրովհետև Հռովմայե,

ցիք այս տեսակ ամուսնութիւնները չարագուշակ կը համարէին:

Կուսնելիա կանգ առաւ քրմուհիներէն կըրտսերագունին քով, որ սիրուն և մանկական ժպիտով բաւ իրեն.

— Ընացակայութեանդ ժամանակ անտառ գնացի՝ քեզ համար վայրի ծաղիկներէ փոքր փունջ մի չի՛նելու:

Եւ ոտքերուն ծայրին վրայ կենալով ըսաւ Կուսնելիայի ականջէն վար.

— Խնդրեմ, ուրիշն մի՛ ըսեր թէ այս առաւօտ, մինչ կը պատրաստուէի ծառի մը վրայ մազցցել, զիս յանկարծակիի բերիք, որովհետև մեծաւորուհին զիս պիտի յանդիմանէ:

— Գաղտնիքդ պիտի պահեմ, սիրելի Փարիզա. բայց, միւսներուն առջև քիչ մի չափաւորէ՛ զքեզ, որովհետև քու տարիքդ ունեցող վեստեան քրմուհի մի արդէն պառուսած պէտք է ըլլայ:

Փարիզա չի հասկցաւ Կուսնելիայի խօսքերուն բոլոր դառնութիւնը, և խիստ կերպ մ'աւանդելով՝ ձեռքերը խալաձև դրաւ կարծքին վրայ և հանդարտութեամբ նստաւ. իսկ Կուսնելիա գնաց զէպ 'ի միւս քրմուհիները որք սեան մի ստորտը նստած էին:

— Շատ ուշ կու գաս, անշուշտ չես գիտեր թէ կայսրն զո՞ւ մի պիտի մատուցանէ աստուածունւոյն, ըսաւ Փլաւիա:

— Գիտե՛մ:

— Ի՛նչպէս իմացար:

Կուսնելիա որ լաւ կը ճանչնար Փլաւիայի հետաքրքրութիւնը, պատասխան չի տուաւ:

— Չես ուզեր ըսել, բայց օւշադրութիւն զիք, որովհետև իրարմէ ծածուկ բաներ պէտք է ընենք, և դրա Փլաւիա բարկութիւնն դողդղալով:

Կուսնելիա կարմրեցաւ. Թէպէտև քաղցր և սիրուն բնաւորութեան սէր, պակայն ուրիշներուն ամէն ըսածները չէր վերցնէր: Խղճմտանքով կը կատարէր իւր քրմուհեայ պարտքերը, և ուրիշի մի իւր զօրծոց վրայ խորհրդածելու իրաւունքը չէր ճանչնար, քանի հեռացաւ մրմնալով:

— Ստիպեալ չեմ գաղտնիքներս ուրիշին պատմելու:

— Գեղեցկութիւնդ զքեզ կը հպարտացնէ, առաջ տարաւ Փլախա՝ իբր թէ ինքնիրեն խօսելով, բայց սիրուն գեւորդ պիտի չ'երջանկացնէ զքեզ, երիտասարդութիւնդ տաճարի մի միայնութեան մէջ պիտի խամբի:

Եւ սկսաւ շրջիլ կամարնեռուն տակ, շարութեամբ ժպտելով: Նոյն միջոցին Կուռնելիա կը խօսէր Փաբիոլայի հետ, բայց խօսակցութիւննին ընդհատեցաւ մեծ քրմուհւոյն զայլովը, որ եկաւ զիրենք առճար տանելու: Մեծ քրմուհւին սկար էր և այնչափ նիւհար, որ պատանքին մէջ փաթթուած գիպկի մի երեղոյն ուներ:

Միւռնեռուն նման զգեստ մ'ալ ինքն հագած էր, և օւրիշնեռն զանազանուելու համար սակեայ շրջանակ մի միայն ուներ, իբր զարդ գիտուն վրայ զետեղուած:

Քրմուհւիներն երկու երկու ետևէն զնացին. բայց տաճարին սեմէն ներս չի մտած, զընացին արարողութեան պատշաճ նիւթերը փնտռելու: Մեծ քրմուհւին հրամայեց Կուռնելիայի որ բուրլաւ մի և փուռջ մի աղաւնիս (verveine) առնէ, իսկ Փաբիոլա պղնձէ աշտանակ մի պիտի բերէր: Փլախա զոտնողութեան յատուկ բաժակ մ'տուաւ, և յորբորդն գինւով լեցուն ըմպանակ մի. յետոյ առճարը մտնելով, լուի շարուեցան խորանին երկու կողմը: Իրենց երկայն սպիտակ հագուստներով, լուրջ և խիստ կերպերով, վե՛տարեան կուսանք կը նմանէին տխուր յաղարկաւորութեան մի խմբուած ուրուականաց:

Քիչ յետոյ, երկու ճերմակ ձիերէ բաշտուած կառք մի տաճարին առջև կեցաւ. երկու անիւ ունէր կապոյտ ներկուած, սակեայ սազ մի առաջակողմը: Չայն վարդ գերին ձիերուն ճիւղուն ճովէն իր բալէր, միկ ձեռքով ասնձերը, միւսով խարազան մի բռնած:

Դուստրիանա անոր մէջ նստած էր երկու սպասուօք պատանեկաց հետ. Հագած էր եղբածիրանի պատմուճանը, և կրած քրմուպետական խոյրը, որ էր տեսակ մի բարձր սրածայր գլխարկ, որ կը յանգէր բրդեայ խրճով մի: Անտուր արագութեամբ վար իջաւ կառքէն, տաճարը մտաւ և սեղանին մօտ գնաց: Մեծ քրմուհւին նշան մ'ըրաւ, և կոյսերն որ սլլ և սլլ առարկայները կը բերէին մօտեցան:

Կուռնելիա բուրլառին մէջ աղաւնիճի մէկ քանի տերևներ զնելով՝ կայտն ամպի մէջ պատեց: Երբ մուկը ցրուեցաւ, Դուստրիանոս բազնոյն երկարեց ձեռքը աղօթք մի մրմնջելով, յետոյ զինւով լեցուն բաժակն առաւ, մօտեցուց երկու իւր շրթանց, խմեց մէկ երկու կաթիլ և մնացածը բազնոյն վրայ թափեց:

Այս արարողութիւնս լմննալով տաճարէն ելաւ երկու պատանեկաց և քրմուհեաց հետ, և երբ մեկնելու կը պատրաստուէր, սուր ճիւղ մի տկանջին հասաւ. իսկոյն այն կողմ դարձաւ և տեսաւ զԿուռնելիա, տոգզոյն, սարսափահար, որ իւր ինկերուհեաց փոքրիկ կարմիր արաւս մի կը ցուցնէր իւր զգեստին վրայ:

Պատանեակներէն մին կայսեր ձեռքէն առնելով բաժակը, որուն մէջ զեռ կային մի քանի կաթիլ զինուց, յակամայս արատաւորած էր քրմուհւոյն պատմուճանը:

Ահարեկեալ կուսանք լուս կը կենային, այս պարզ դեպքն ձախորդութեան մի կարպետը կարծելով: Իսկ Կուռնելիա, աչքէ չէր կորսնցներ այն հետքը որ իւր սպիտակ վերաբոկուն վրայ թողած էր կայսեր ուխտն: Փաբիոլա որ տերութեամբ իրեն կը նայէր, քօլը եկաւ և ըսաւ.

— Հետս եկուք սրբարանը. աստուածունւոյն ջուրն պիտի լուանայ պատմուճանդ և ո՛ր է գժբաղդութենէ ազատ պիտի պահէ զքեզ:

— Շատ անգամ ամենամեծ ճշմարտութիւններն տղայոց բերնէն կը լուռին, ըսաւ Կուռնելիա ինքն իրեն աւագանին մօտենալով, աբ նոյնհետայն փաբիոլայի փոքրիկ ձեռքերն անհետ ըրին արատը:

— Մի՛ վախեր, իմ պատճառաւ զիտուց փորձանք չի գար. անկէց վերջը, ինչպէս հիմակ տեսար, արատ չի կայ որ անջնջելի ըլլայ, ըսաւ Դուստրիանոս, ձեռքը երկարելով որ Կուռնելիայի հագուստին ծայրէն բռնէ:

Մանկամարդ կոյսն ժամանակին ետ քաշուեցաւ. այս ձայնս սարսաղացիք էր զինքը: Կայսրն հեզնօրէն ժպտեցաւ, և անոր ծռելով,

— Պիտի տեսնուի՞նք, ըսաւ ցած ձայնիւ: Յետոյ երեք անգամ ձեռքը դեպ 'ի տաճարն երկարեց, և կառք նստելով կամաց կամաց հեռացաւ:

Իւր երթալէն վերջը, քրմուհւիներն Նու-

մայի պաշտօր վերադարձան: Կուռնեիլիա իւր ննջարանը գնաց, և անկողնոյն վրայ նստելով, առաւ զլուին իւր ձեռաց մէջ, խոր մը-տածմանց մէջ թաղուած: Փարբիոյա որ հետն եկած էր, բոլը նստաւ: Բարեսիրտ փոքրիկն կը նեղուէր՝ իւր բարեկամուհւոյն տխրու-թիւնը տեսնելով: Բայց չի կարենալով երկար ժամանակ լռել, անոր ծնգաց վրայ ելաւ, և զնա զրկելով,

— Պիտի տեսնուի՞նք, ըսաւ՝ կայսեր խօսքերը ձեռացնելով: Ինչո՞ւ սուրիս չես:

Կուռնեիլիա դարձեալ սարսուաց, և, մէկզի հրելով զՓարբիոյա, իւր սենեկին մէջ սկսաւ քալել, ցած և ընդհատեալ ձայնիւ մը մտալով:

— Չըլլայ թէ ահաւոր երաց մ'ըլլայ այս: Բայց 'ի այս անմեղ արարածէն, հոս ոչ ոք կը սիրէ զիս, որու կրնամ խորհուրդ հարցնել... Ո՛հ, Վեստա՛, Վեստա՛, պաշտպանէ՛ զիս, քանի որ նոյն ինքն Գոմի-տիլլա ըսաւ՝ որ զիսու փորձանք պիտի հանդիպի... Հովկէլլանտէ և Վերոնիլլա յիրաւի մեղապարտ էին արգօք, թէ մարդկային չարութիւնն զանոնք զերեզմանի զատապարտեց: Բայց քիչ մի վերջը տխրութեամբ ժպտե-լով անչորաց:

— Միտոս երկչոտ է ինչպէս ամբիկեան վիթիին սիրան. բայց ինչո՞ւ զուր տեղ վախ-նամ... Փարբիոյա՛, ըսաւ՝ զայն իւր սրտին վրայ սեղմելով, մեծաւորահիէն հրաման պիտի առնու՞մ երթալ տեսնելու ժողովրդեան դա-ռէն մանկամարդ կին մի որ հօրս յարկին ներքի ծնած է. սպասէ՛ հոս, քիչ մի վերջը կու գամ:

Գուրս ելաւ, և քիչ ժամանակէն ներս գալով՝ երկար և սիրալիւր խօսակցութիւն մ'աւնեցաւ Փարբիոյայի հետ, և կարծես բոլոր մտմտունքները մոռնալով սկսաւ ժպտիլ: Մինչև երեկոյ մէկտեղ կեցան, յետոյ Կուռնե-լիա Փլորոնիայի առունը երթալու պատրաստուեցաւ. բայց խղճմտանքի խայթի պէս ըզգացում մի իւր սիրտը կը խռովէր, որովհետև քրիստոնէի մի սունը պիտի երթար:

Քրիստոնէութիւնն, որ նախ արհամարհուեցաւ և խենդութեան կարգ զատուեցաւ կու-

պաշտնեցու կողմէն, և որուն առաջին հե-տևողներն աղքատ դատակարգէն եղան, օրէ օր կը տեսնէր իւր հաւատացեցող թուոյն աւելնալն. և այս կրօնքս, որ ծագած էր Հռովմայեցոց կողմանէ բարբարոս կարծուած երկրի մի մէջ, և որ տարածուեր էր Հոգոյն սրբոյ շնորհիւ զիսուս զարձած մարդկան միջոցով, հակայական քայլերով կ'ողողէր քաղաքակա-նութեան կեդրոնը, իրենց պատուամոլանաց վրայ կուռքերը զղրցելով:

Արդ, անհնար էր առանց հրաշքի մի՛ զոր նոյն ինքն անհաւատն չի կարենար ժրի-տել, կործանել կրօնք մի որ օրինաւոր կը սեպէր ամէն տեսակ ապօրէն հաճոյքները, ազնուացնելով՝ կամ լաւ ևս՝ նուիրագործե-լով զանոնք. որքան դժուար պիտի ըլլար փո-խանակ ասոր՝ մարմնական հաճոյքները դա-տապարտող կրօնք մի ընդունիլ: Մարդուս ընտելեան մէջ է գերադասել զիւրիկն՝ զը-ժուարէն, վայելքը՝ զրկանքէն. և ճշմարիտ քրիստոնեայ մի հարկ է որ ինքզինքը շատ բաներէ զրկէ և մեծ զոհողութիւններ ընէ: Աստուած միայն կրնար այն մեծ զործը կա-տարել, ինքն միայն կրնար թոյլ տալ՝ որ Աստուղիւն, Առամազդայ և Բակրոսի բազին-ներն կործանին խաչին, մարտիրոսութեան նշանակին առջև Կայսերք և քուրմերն որ նախ ծիծաղած էին այս դաւանութեան վրայ, օտե-նելով որ նա բարձր դասուց մէջ ալ իրեն հետևորդներ կը գտնէ, վախյա՞ն և 'ի զուր տեղ զայն ջնջելու որոշում տուին:

Այս պատճառաւ Կուռնեիլիա կը դժկամա-կէր Փլորոնիայի տունը երթալու. բայց ուրովհետև իւր այցելութեան զխաւոր նպա-տակն էր տեսնել իւր հիւանդ հօրեզօրօր-դին, տիրապետեց ինքն իր վրայ և հան-գարտ քայլելով գնաց դէպ 'ի իւր պատգա-րակը որ գաւթէն դուրս իրեն կը սպասէր: Տանարին առջևէն ուզեց անցնիլ զայն ող-ջունելու համար, յետոյ հեռացաւ. սակայն երբեմն երբեմն զուրք զարձնելով՝ տեսնելու զՓարբիոյա որ սեան մի կոթման իւր հետա-նալը կը դիտէր:

(Շարապարեցի)